

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ**

«ԿՐԻՍՏԵԽ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԱԳՐՔԻ (ՀՕ-247) 240-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ 4-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԻ՝ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ԴՐԱՆ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Կրիստեխ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ՀՕ-247) 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի՝ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործով Սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմի առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է.

«Վերանայել ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից 22.09.2009 թվականի թիվ ՍԴՈ-832 որոշումը՝ 17.06.1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության ՀՕ-247 օրենսգրքի 240 հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի՝ Սահմանադրությանը համապատասխանության մասով:

ՀՀ քաղաքացիական դատավարության ՀՕ-247 օրենսգրքի 240 հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը՝ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին և 171-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր»:

2. Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթի մասով առկա է Սահմանադրական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 22-ի ՍԴՈ-832 որոշման վերանայման անհրաժեշտություն, քանի որ նշված որոշման կայացման պահին գործում էր 2005 թվականի

փոփոխություններով Սահմանադրությունը, որի 92-րդ հոդվածի կարգավորումներում Վճռաբեկ դատարանին վերապահված էր ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը, իսկ ներկայիս (2015թ. փոփոխություններով) Սահմանադրությամբ Վճռաբեկ դատարանը լիազորված է դատական ակտերի վերանայման միջոցով ապահովել օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, ինչպես նաև վերացնել մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները: Դիմողն ընդգծում է, որ ներկա խմբագրմամբ Սահմանադրությունը հստակորեն սահմանում է, որ Վճռաբեկ դատարանը վերանայում է դատական ակտերը և ոչ թե՛ գործը: Հետևաբար, առկա է Սահմանադրական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 22-ի ՍԴՈ-832 որոշման վերանայման հիմք, քանի որ փոփոխվել է Սահմանադրության՝ խնդրո առարկա գործով կիրառված դրույթը:

3. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից՝ գործի քննության ընդունումը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրական դատարանը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 16-րդ կետի համաձայն, վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին, ինչպես նաև վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին որոշումները կարող է վերանայել, եթե՝

1) փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը, կամ

2) ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված՝ Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Սահմանադրական դատարանի այլ որոշում, և տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանի որոշումը վերանայելու վերաբերյալ գործը քննության է ընդունվում Սահմանադրական դատարանի աշխատակարգային

որոշմամբ՝ Սահմանադրական դատարանի դատավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 13-րդ մասի, 68-րդ հոդվածի 17-րդ մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը,
Ո Ր Ո Շ Ե Ց Ց .

«Կրիստեխ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ՀՕ-247) 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի՝ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննության ընդունումը մերժել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**



Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

23 հուլիսի 2018 թվականի
ՄԴԱՌ-53